22. Յերկուշաբաթոջ գտան ուղէկիցք լութերականք ոմանք վաճառականք ի Լէօպոլսոյ, որք ի վաճառատեղն էին գնալոց. ընդ որս և ես ուղեկցեցայ՝ վարձեալ զկառ. եկն ընդ իս և Բան Թէօտոր Սապաթ։ Ի վաճառատեղիս յայս յամենայնում ամի յաւուր Յոհաննէս Աստուածածնին, ըստ հնոյ տուամարին, յութ սեպտեմբերի, սովորք են վաճառականք ի զանազանից գաւառաց համագումարիլ պէսպէս վաճառօք. որ կիսով մղոնաւ հեռի է ի Սնաթինու, ի սահմանին Պուղտանաց. ուր ոչ քաղաք և ոչ գիւղ է, այլ յանմարդում վայրի՝ զխուզս յոստոց ծառոց յօրինեալք՝ մնան իբր եօթնեակս երկուս կամ երիս, և անուանեն Օթաք։ Անդէն զոմանս տեսի արեւելցիս ծանօթս, զԵրեւանցիս, Նախջեւանցիս, Կապանցիս, և այլս. յամենալք անդէն իբրեւ զժամս երկուս, ընդ նոյնց ուղեկցաց գնացինք դէպ ի Գամէնից, և երեկոյին օթեցինք ի գեօղն Գօցման, որ առ մէթրոփոլիտն Պուղտանաց պատկանի։

23. Յերեքշաբաթոջ ելեալք անտի գիշերայն, փութացաք հասանել յայնմ աւուր ի Գամենից. բայց մոլորեցեալք՝ յանտեղեկութենէ կառավարչաց՝ ընդ ձորակս և յանտառս անմարդիս, յետ հասարակ աւուրն հազիւ ի գեօղն Զամշուվ հասինք, ուստի անդր անցանելոց էաք նաւու ընդ գետն Տնեստր։ Ճաշեալք անդէն՝ մնացինք ոչ սակաւ գալստեան նաւավարին, և անցեալք յայնկոյս, ուղեկիցքն Լութհէրականք հատուցին և վասն իմ զնաւլուն, որք և ընդ ամենայն ճանապարհն ոչ նուազ զգթութիւն քրիստոնէական՝ քան զմարդավարութիւն ապացուցին. մերթ յընթրիս իւրեանց հրաւիրելով, երբեմն զգինի և զցքի, զկոգի և զհաց պաշտպանելով, յ՚օրսոց իւրեանց ըզբաժինս տալով, բազմիցս զտեղի առնլով՝ մինչ կառն իմ միաձի յամէր ժամանել նոցա. երբեմն օգնելով կառավարչին իմում յանցս դժուարինս, և այլովք պաշտօնատարութեամբք պարաւանդեցին զիս, թէ և անծանօթք. որոց տացէ Տէր զլոյս ճշմարտութեան։ Թանտէմ, յերեկոյին անագան հասինք յաւան Զառնօքօզնի՛ցայ կոչեցեալ, որ պատկանի առ եպիսկոպոսն Գամենիցու, և է փէէփօզիթուրայ. որոյ զդղեակն հանդերձ պաղատաւան եպիսկոպոսական՝ վաղ ուրեմն ամբողջ տեսեալ էր իմ՝ նախ քան զամս 38. և արդ գտի տապալեցեալ։

24. Ի չորեքշաբաթոջ մինչ ելեալք անտի անցաք զառիվերն, սկսաւ անձրեւ մեղմաբար ցօղել. ի մտանելն յանտառն և յիջանել զառիվայրն ի ձորակն, յորում է առու մարգամէջ, առաւելաւ անձրեւն. իբրեւ անցինք ընդ այն դժուարութեամբ և ելինք ընդ դարն, յորդեցաւ յոյժ անձրեւն, մինչ գրեթէ ամենեւին թացաք. և յետոյ փոխեցաւ ի կարկուտ խիտ, հողմով ցըրտաշնչիւ, յորմէ սառուցեալք դողայաք. և հոսէին ընդ ուղին հեղեղք յորդք դէպ առ ձորակն՝ ընդ որ անցինք. եթէ դոյն ինչ յառաջագոյն իցէր սկսեալ, արդարեւ յայնկոյս առուոյն մնացեալք էաք, կամ յանմարդում վայրի. կարկուտն՝ վերստին յանձրեւ փոխեցեալ՝ խստութեամբ օդոյ այնքան վշտացոյց, մինչ յուսահատեալ մեզ, եթէ ոչ գիտիցէաք մերձ գոլ ոմն գեօղ կոչեցեալ Խա-